

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

### Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՑ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 52

1899 ՄԱՐՏ 20

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթասարի ծախք եւ բազմութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 105 դրուց:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական. — Հանգանակի Բ. շրջանի վերջին թիւը:  
Մէտրոն Ուղարկական. — Միւթարական կողմեր:  
Ղ. Բուր. — Պարտիզանական կենդանաւորութիւն:  
Ղ. Բուր. — Թէ ի՞նչ է պատճառը:  
Մեմբ. — Տիկին Զարուհի Ռ. Յ. Պէրպէրեան:  
Ղ. Բուր. — Կաշիի վրայ ոսկեգօծ տառեր դրուագել:  
Ղ. Բուր. — Հաւարուծական. Հաւերու ոջիւն դէմ:  
Ղ. Բուր. — Մեքենախօսական:  
Տանքիւն. — Խոհանոցի բաժինը:  
Յանկ Նիւթոն. — Հանգանակի Բ. Տարեշրջանին:  
Թերթոն. — Ուղեւորութիւն երկրիս կեդրոնը:  
Թղթակցութիւն, Ազդ. եւ այլն.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պալիս, Պապ. Ոյի ճառատեմ, Թիւ 44

## Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աղջէհիր.—Գ. Մ. Է.—Բաժնեգիրնր  
ստացած և ապսպրած գիրքերնիր յանձ-  
նած ենք:

Սըվազ.—Գործակալ.—Ստացած ենք  
նամակնիր:

Խօսուհի.—Նոյնպէս:

Սիլիվրի.—Գործակալ.—Նամակնիր  
ստացած ենք. մեր զբաղումնդրու շա-  
տութեան պատճառաւ է որ չենք կըր-  
նար յաճախ գրել:

Զիպա.—Նոյնպէս:

Ատաբազար.—Գործակալ.—Նոյնպէս:

Մանիսա.—Գ. Կ. Ունճեան էֆ. Նա-  
մակ զրկեցինք Ձեր յանձնարարութեան  
մասին:

Պայընտըր.—Գէորգ Գ. Փափազեան  
էֆ.—Բաժնեգիրնր կրնաք բօսթի փուլով  
զրկել. նամակը ապահովեալ. վեցամ-  
սեայի համար, 26 հատ 1 զրչնոց փուլ:

Պարտիզակ.—Ն. Փափազեան էֆ.—  
Նամակնիր ստացած ենք:

Թիրէպօլու.—Գ. Գըլըճեան էֆ.—  
Նամակնիր ստացած ենք. մօտաւորապէս:  
Իզմիր.—Մ. Ն. Միքայէլեան էֆ.—Ձեր  
անակընկալին շնորհակալութիւն կար-  
ծիքնիր սխալ չէ՝ կը հաստատեմ. նամակ  
կ'ընդունիք:

Մարգուան.—Ա. Կիւլպէնկեան էֆ.—  
Յառաջիկային կը պատասխանենք Ձեր  
նամակին:

## Ա Ձ Դ

### Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

Արեւելեան Մ.—Է. 29րդ Տարի, Կիսամաթերթ,  
աղգային, Գրական և Քաղաքական խմբագիր-Տնօրէն  
Մ. Մամուրեան: - Տարեկան կանխիկ 80 զրչ կամ 17  
ֆրանք, Ուսուցիչներու համար 60 զրչ կամ 13 ֆրանք:  
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

Բաշմէլ.— 57րդ տարի, ամաթերթ, Հայ մասե-  
նագրական, ստալագրական, պատմական, քերական.

նական, աշխարհագրական, հնախօսական, ևլն: - Տա-  
րեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",  
St. Lazare Venise (Itali)

Հանրեւ Ստեփան.— 13րդ տարի, ամաթերթ. Հայ-  
գրական յօդուածներէն զտտ ճշտիւ տեղեկութիւն  
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւլն. Ի  
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-  
րայ ևլն եւլն: - Տարեկան կանխիկ 10 ֆրանք:

- à la Rédaction de la Revue "Hantess",

VII<sup>e</sup> 2 Mechitharistengasse 4.  
Vienne (Autriche)

### ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾԵՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՅ

#### ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՆՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառագիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ  
գործնական սճով բժշկութեան, Վիրաբուժութեան.  
Առողջաբանութեան, Հորտարարութեան, Բնաբա-  
նութեան, Քիմիայի, գեղերու. Բնական պատմա-  
թեանց, Աստղագիտութեան, Երկրագործութեան և  
այլ գիտութեանց վրայ:

Ըստ կարելւոյն ամենայն խնամք տարուած է բա-  
ռերու ճշգրտութեան: Բնագրական բացատրութիւններ  
կուտայ Իւրաքանչիւր նիւթի վրայ, Ի բաց առեալ ա-  
մէնէն անգործածական նիւթերն. Իսկ կարեւոր նիւ-  
թոց վրայ ևլն յօդով օգտակար տեղեկութիւնք տնպա-  
կաս են: Այս աշխատութիւնը որպէս զի լինիքան կա-  
տարեալ լըլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է  
շատ մը հանրագիտական եւրոպական բառարաններ:

Գիտական բառերու մասին առաջնակարգ թի-  
կուհիք եղած է այս գործիս Վ. Հ. Քալուշեւոյ Հանր-  
էիքան բնագրական ընտիր բառագիրքն, Իսկ բուսոց մա-  
սին Վ. Հ. Սիւլանի Հայ-բան: Աւելորդ չէ համար-  
ուած դիմելու նաեւ մասնաճեղքերու վրայ խօսող գըր-  
քերու օգնութեան:

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ բա-  
ղըով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն  
զանոնք խմբագրած է մի հատորի մէջ՝ զարգարելով  
ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով:

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութածալ թերթերու  
մէջ, Իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հա-  
րիւրորդամեղր, լայնք 16 հրմ. գրերն մանր և գիւր-  
ընթեան լի:

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 սան-  
թիմ, ամբողջ գիրքն 10 ֆրանք (—4 բուլլի, 2 սու-  
ար) զոր կանխիկ ներփակեալ տոմսկաւ պէտք է փա-  
փաթողն յղէ առ Տնչութիւն Վեներաբիլ Միթմար-  
եան Տպագրատան. ապահովագրեալ նամակաւ եթէ  
կ'ուղէ ընդունիլ թերթերը:

Թերթերն կը զրկուին հինգ հինգ Իւրաքանչիւր  
անգամ: Խուստատունի և Տաճկաստանի համար լայտ-  
նի է թէ լուսագրն է յանձնարարականաւ (recom-  
mandé) զրկել. առ այս փափաքողն պէտք է 25ն:

# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

## ԼՐԱԳԻՐ

### Գրական եւ Գիտական

Encyclopédie

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ՐՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 52

1899 ՄԱՐՏ 20

### “ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի

Բ. ՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԹԻԻԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ հանրային իրական օգտին ծառայելու ուղղութեան հետ՝ նիւթական ու բարոյական գոհացութիւններ յանձն առնելով կը բոլորէ ահաւասիկ իր այս Շրջանն՝ հաւասարմասպէս տալով իր բաժանորդներուն՝ իր ծրագրին և ուղղութեան վերաբերեալ բազմազան և հիւթեղ նիւթեր, ատրեկան ամբողջ 52 օրինակներով մէջ ամփոփուած, բարձրագոյն հրամանաւ դադարման դատապարտուած երկու շաբաթներու պակասներն ալ լրացնելով հանդերձ:

Յառաջիկայ շաբաթ՝ «Հանրագիտակ» իր Գ. Շրջանը կ'սկսի աւելի նոր ուժերով, նորանոր գործունէութիւններով զօ-

րացած, ինչպէս որ հետագայ առաջին թերթով պիտի յայտարարէ:

Այս առթիւ շեշտելով կը խնդրենք մեր այն Պատուարժան Բաժանորդներէն և Գործակալներէն, որք տակաւին առկախ հաշիւներ ունին, հաճին հնար եղածին չափ «անմիջական» կերպով կարգադրել:

Նոյնպէս և մեր սրտագին շնորհակալիքը չենք մոռնար յայտնելու «Հանրագիտակ»ի բարերար ու բարեկամ այն բուրբ բաժանորդներու, որոնք ոչ միայն կանխաւ հատուցած են իրենց պարգւրը, այլ նաեւ մէկէ աւելի բաժանորդագին վճարելով, կողմ մը ազբաւիկ վարժարաններու ալ մէյմէկ օրինակ Հանրագիտակ նուիրած են, թէ՛ քաջալերելու համար Հանրագիտակը, և թէ՛ Հանրագիտակի օշոտաւթութիւնը տարածելու համար:

## ՄԻԹԱՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ



Մեր հանրային կամ անհատական կեանքին մէջ տակաւածիւ չեն այն կենսունակ կամ հրատապ խնդիրներն, որոց մասին ամէն օր մեր թերթերն իրենց գաղափարն ու կարծիքը կը ցոյացնեն, թէ անոցմէ մեծ մասը՝ դժբախտաբար՝ փոխանակ լուծուելու, մէջտեղէն վերնալու, աւելի կ'արգասաւորուի, աւելի կը բազմապատուի:

Այսօր Հիւանդանոցն է, վազը՝ անարժան քահանայ մը, միւս օր այս ինչ վարժարանը, այն ինչ օր որբանոցը և շարունակաբար՝ Կարծես խօսք մէկ ըրած են ամէնքն ալ հասարակութիւնը իրենցմով գրադեցնելու. մանաւանդ վարժարաններու խնդիրը որ յաւիտեանական ըլլալու կ'սպառնայ:

Այս սրտմտեցնող իրողութեանց հանդէպ՝ ընտանեացի միտքով քան մը կը փնտռէ աչքերնիս՝ գէթ վայրկեան մը տափակ կամ կնճառոտ հարցի մը սրտածառած նեղութիւնը մոռնալու և Դիոգենէսեան լապտեր ի ձեռին մեր հանրային գործերուն տխուր ցուցահանդէսին մէջէն անցնելով սրահ մը կանգ տունելու անոցմէ ոմանց առջև միայն:

Հիւանդանոցը. — «Ազգին Տունը» ինչպէս սոյնջափ անկեղծօրէն կը կոչենք — միակն է թերևս որ մեր ամենուս գթութեան առարկան ըլլայ ամենէն աւելի և ամենէն առաջ: Վերջերս ի նպաստ իրեն կազմուած նուագահանդէսը ցայց տուաւ թէ մենք կրնանք եղեր — եթէ ուզենք — ազգին կարօտեալներուն օգնելու մէջ պէտք եղած ձեռներեցութեան ոգին արտայայտել. այդ նուագահանդէսը փոփոխ բան մը պիտի ունենայ միշտ ոչ-հիւանդներուն համար ալ: Ինչ աղէկ կ'ըլլար եթէ այս առաջին փորձէն քաջազգրուած ուրիշներ ալ կազմակերպելու օգտակար փորձ մադրութիւնն ունենային մեր պաշտօնական կամ օչ-պաշտօնական մարմինները(\*):

Յաջորդութիւն Տ. Խաչատուր քահանային. — Այսպիսի օրքան որ գթութեան գործի մը իրականացման համար մտածուած է, բայց... քիչ մը ջուր կը վերցնէ: Տ. Խաչատուր

տուր քահանայի ժողովրդականութիւնը, վաշեա՛ծ համբաւը, գտած փառքն ու պատիւը — բառերը ճիշտ իրենց տեղն են — անոր Երանգները վերջապէ՛ս կ'երևի թէ չեն քնացներ կոր մեր... բարենախանձ աշխատանքները: Ծանօթ գիւղերու մէջ անոցմէ խրտուռներ կան արդէն այդ յաջորդութիւնը ձեռք անցնելու համար: Բայց ինչո՞ւ, ինչպէ՞ս յարգոյ յօդուածագիր մը գիտել տուած է այնչափ իրաւամբ, այդ նախանձուտ հոգեւորներուն ամէնուն ալ՝ դէպի այդ միտի կէտը՝ արշաւանքը...:

Վանի կարօտեալները. — Չուզելով այս խնդրոյն մասին կրկնել արդէն ըսուածները, ես պիտի բաւական համարեմ միայն այդ խնդրներուն մասամբ օգնելու նպատակաւ Արեւելի բացած նախապատենքու ցանկին և Ծաղկազարդեան բացառիկ թիւին հրատարակումին նկատմամբ քանի մը խօսք ըսելը:

Ինչպէս անցեալ ամսի Մարտի ձեռն տակ այս տարի ևս Արեւելք նախաձեռնութիւնը կ'ունենայ ազգօգուտ գաղափար մը յղանալով ու զայն գործադրութեան կ'ընելով նպատակ անոր արդեամբ՝ մեր անոքներուն, աղքատներուն: Այդ ձեռնարկը գովելի է ամէն կերպով: Ոչ-հիւանդները իրենց եղբայրակից հիւանդներուն, որբերուն ձեռնաու ըլլալով հանդերձ՝ պատճառներ պիտի ունենան բարոյապէս ու մտաւորապէս քանի մը հաճելի ժամեր անցընելու՝ կարգալով պարունակութիւնը թերթի մը որ իրօք բացառիկ է անոր համար ալ որ մեր ծանօթ լաւագոյն գրողները հոն՝ իբր թէ կաճառի մը մէջ՝ ժամագրութիւն տուած պիտի ըլլան, մեծամասնութեամբ իրորու մօտ գտնուելով: Ու յետոյ փութը հոգիներն են որոնք պիտի սփոփուին ու ժպտան: Աւելորդ է ըսել թէ, հանրածանօթ օրաթերթին խմբ. Մարմինը իր յանձն առած զահպութիւններով — հրատարակութեան պէտք եղած նիւթական ծախքերը տալով — նուազ արժանի չէ մեր ամենուն համակրութեան: Բայց այդ համակրութիւնը այն ատեն աւելի իրական, աւելի գործնական պիտի դառնայ, երբ լայնօրէն Երանգն ձեռն առնէ զգեհունը: Մեր երազն է որ ամէն բարեկեցիկ կամ հարուստ, թէ՛ հաս և թէ՛ գաւառները, պիտի զգայ իր մէջ նուէր

(\*) Այս մասին մեր կարծիքը պիտի յայտնենք մասնաւոր յօդուածով մը: Ծ. Խ.

մը բաժին հանելու պէտքը՝ իր չքաւոր եղ-  
րայրակիցներուն համար, արձանագրելով իր  
անունը նուիրատուներու ցանկին մէջ:

Շուշի վարժարանը.—Տարադի 8րդ թի-  
ւին յաւերուածն եղող հեռագրական լուրէ  
մը կը տեղեկանանք թէ Թիֆլիսաքնուի Շու-  
շեցի մեծահարուստ նաւթատէր Պ. Գրիգոր  
Մարտիրոսեան Առաքելեան իր անձնական  
ծախքով սկսած է կառուցանել սոսի Շուշայ  
«Քէպական դպրոցը»: Այդ հաստատութեան  
համար հարկ եղած պիւտճէն 100,000 թալ.  
է. պատկառելի՝ գումար: Լուրը «քանչեւի՛ն»  
անակնկալ մը ըլլալէ զատ, առատածեռնու-  
նութեան փայլուն օրինակ՝ մըն է: Ասլիքն  
մեր ճշմարիտ բարերարները:

#### ՄԻՀՐԱՆ ՌԻՂՈՒՐԼԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 79 ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆ

#### ՊԱՐՏԻՉՊԱՆԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

#### ՎԵԱՍՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐԸ ՈՉՆՁԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Դարձնալով թիւ 50)

Քանի որ գիշերուկներու վրայ կը խօսինք,  
ըսենք թէ՝ տառք բազմաթիւ տեսակներ կը  
կազմեն, և իրենց նախընտրած բանջարեղէ-  
նին կամ բոյսին անունով կը ճանչցուին: Չոր  
օրինակ, «կաղամբի գիշերուկը», որ Յուկէս  
հարմէթրի չափ երկայնութիւն կ'ունենայ,  
մորթին գոյնը կը տարբերի գորշ դեղինէն  
մինչև մոլդ կանաչ, և երբեմն ալ կ'ունակին  
վրայ մարմարիոնի պէս թուի ու սև գծե-  
րով երանգուած, և երկու կողմէն ալ մէյ  
մէկ դեղին գծերով:

Այս թրթուրը կաղամբին տերեւները ծա-  
կիով, մինչև կուրծքը կը մխրճկի, հետեւա-  
բար և դժուարին է զինքը ոչնչացնել: Իր  
թիթեռնիկը ապրիլի վերջերը երեւան կուգայ,  
և իր ցեղին վերաբերող միւս գիշերուկներուն  
պէս հաւկիթնիկը կ'ածէ հողին վրայ, ու-

րոյմէ անմիջապէս վերայիշեալ թրթուրները  
դուրս կ'ելլեն:

Գիշերուկներու թրթուրները գարնան մէջ  
կամ վերջերը կը կծկին ընդհանրապէս՝ հո-  
գին մէջ մոռնելով, կամ երբեմն ալ իրենց  
նախընտրած բոյսի տերեւներուն կոթերուն  
վրայ, որ չափ երկար չի տեսեր, և մէկ քանի  
օրէն թիթեռնիկը դուրս կ'ելլէ:

Թերուզակներու թրթուրները ընդհանրա-  
պէս իրենց կռնակին վրայ քիչ կամ չափաւ-  
րաւազէր կ'ունենան, որով գիշերուկներու  
թրթուրներէն կը տարբերին:

Այս տարբոյն եղանակները նպաստաւոր  
ըլլան, այսինքն տաք, այս թիթեռնիկները  
երկու անգամ կը սերնդաւորին, առաջին թի-  
թեռնիկներու ածած հաւկիթներէն երած  
թրթուրները աչնան մօտ իրենց այլակերպու-  
թիւնը կատարելով, նոր թիթեռնիկներ դուրս  
կ'ելլեն, որոնք ևս իրենց կարգին կը ծուա-  
ծեն:

Այս պատճառաւ է որ, երբեմն խիստ չափ  
կ'ըլլան այս թիթեռնիկները և թրթուրները:

Այս միջատներու առաջին անունը չափ  
դժուար է: Ահաւասիկ թէ ինչ միջոցներու  
կը դիմենժարուպի մէջ՝ ընդհանրապէս Բա-  
նի որ իւրաքանչիւր թիթեռնիկ 1—200 հաւ-  
կիթներ կ'ածէ, ըսել է աւելի բաժնական կ'ըլ-  
լայ թրթուրէն առաջ թիթեռնիկները աչնա-  
ցնել. ասոր համար, պարտէզներու մէջ, տեղ  
տեղ կարճ ձողերու վրայ հաստատուած տախ-  
տակներ կը զետեղեն և ասոնց երեսները կըպ-  
չուն նիւթով մը կը ծածկեն. զոր օրինակ,  
չաքարի շուռուպով, այնպէս որ, թիթեռ-  
նիկները անոնց մօտեցած ատեննին վրան կը  
փակին և այլևս չեն ազատիր: Կար տերեւա-  
խիտ ճիւղեր նոյնպէս կաշուն նիւթով մը կը  
ծածկեն, և տեղ տեղ կը տնկեն պարտէզը,  
բանջարեղէններու մէջ, որ նոյն արդիւնքը  
կուտայ:

Իսկ նոյն ինքն թրթուրները հողին մէջ  
ոչնչացնելու համար կը գործածեն կարգ մը  
միջատասպան դեղեր, որոնց մէջէն ամենէն  
աւելի ազդեցիկը բնածուրի ծծմբուկ (սիւլ-  
ֆիւռ տը քառպօն) կոչուած հեղուկն է.  
բայց թէ՝ գործածութիւնը դժուար և թէ  
սուղ ըլլալուն, ցարդ գործնական արդիւնք  
մը յառաջ բերած չէ: Ասկէ վերջը կուգայ  
կալիոնի բնածխատի ծծմբուկը (սիւլֆո-

քառասունութ ար բոթասիրտ) — Տե՛ս Հնրգ. թ. 10 —, որու 10 կուսմը 1 լիթրա ջուրի մէջ, կամ յոր նոյնն է տեղական 1 տրամը՝ 100 տրամ ջուրի մէջ կը հալեցնեն, և փաած աղ-  
րի վրայ լեցնելով, տունկերը տնկելէ առաջ, անոնց որոշեալ տեղը (պղտիկ փոսիկներուն մէջ) մէյմէկ քիչ կը դնեն, և անոնց վրայ կը անկեն։ Բայց ինչպէ՞ս ըսինք, այս երկու դե-  
ղերն ալ, որ ամենէն զօրաւորներն են, և ոչ թէ գիշերուկներու թրթուրները միայն, այլ  
բոլոր այդ հոտիկ միջատները կոշնջացնեն, սակայն իրենց սղութեան պատճառաւ դիւ-  
րամառչելի չըլլալուն, տեսնենք թէ ուրիշ  
ի՛նչ միջոցներ կրնանք գործածել այդ գիշե-  
րուկներու թրթուրները ոչնչացնելու համար։

Ինչպէ՞ս դուք ալ փորձով հաստատած էք  
թէ, այդ թրթուրները հողին երեսէն 2—3  
մատի չափ խոր տեղումնք կը գտնուին, և  
անմիջապէս ձեր սմբուկներուն ևն ի արմատա-  
ներուն շուրջը, ըսել է՝ գործածուելիք դեղը  
պէտք է նոյն խաւ արմատներուն շուրջովը  
գտնուի։ Այս Գաթին ամենէն աւելի Խոթան եւ  
դիւրագործածելին հեռեւեալն է։

Առէք բուրդի փոշի, կամ փայտի սղոցակ.  
վրան լեցողէք քարիւղ, աղէկ մը խառնելով.  
այդ փայտի սղոցակը խառնեցէք յետոյ աղի  
հետ, 10 մաս այս վերջինէն և 1 մաս ալ փայ-  
տի սղոցակէն, և ամէնը խառնեցէք փոշիա-  
ցած հողի հետ։ Եթէ ատոնց հետ քիչ մըն  
ալ ձանձախարիթ (օճազ գուրումը) խառնէք,  
այն ատեն թէ՛ սղրերնիդ զօրաւոր ըլլալով  
առատ բերք կ'ստանաք, և թէ՛ ձանձախա-  
րիթն ալ արդէն միջատները սպաննելու  
յատկութիւն ունենալովը, գարմաննիդ ագ-  
դու կ'ըլլայ։ Փակագծի մէջ անցողակի ըսենք  
թէ, ձանձախարիթը շատ զօրաւոր աղբ մ'է.  
ուստի՝ ձեր ծխնելողները շարունակ մաքրե-  
ցէք, և ելած ձանձախարիթը ինամով պա-  
հեցէք, զոր կրնաք գործածել ի պահունջել  
հարկին. բայց որպէս զի խնդիրէն չի շեղինք,  
այս մագին ուրիշ առթիւ պէտք եղած բա-  
ցատրութիւնը կուտունք, և կ'անցնինք գի-  
շերուկներու թրթուրները ոչնչացնելու միջո-  
ցին վրայ խօսելու։

Հիմա պէտք է որ ձեր սմբուկները ևն.  
մէկ գծի վրայ տնկէք։ Այդ գծերու սղ-  
ութիւնով փոքր խրամատներ կը լանաք  
նախ բրիչով, և վերոյիշեալ կերպով պատ-

րաստուած աղբը այդ խրամատներուն մէջ կը  
տարածէք, վրան կը ծածկէք քիչ մը հողով,  
և ըստ սովորութեան կը տնկէք կարգաւ ձեր  
տունկերը. ահա այս կերպով կրնաք վստահ  
ըլլալ որ 70 առ հարիւր ձեր տունկերը զերծ  
կը մնան այդ գիշերուկներու խաթախումնե-  
րէն։

Չի մոռնա՞նք սակայն ըսելու թէ, քարիւղի  
ազդեցութիւնը երկար չի տևեր, բայց մինչև  
որ իր զօրութիւնը սպառի, արդէն ձեր տուն-  
կերն իսկ զօրացած ըլլալով, անոնց խաթա-  
թումէն չեն վախնար։

Բաթթեօւեալն Համալսարանը այժմ իր ուշը  
դարձուցած է փնտալար թրթուրիկները ո-  
չնչացնելու, տարբեր գործեան մը  
վրայ, որ մեծ արմուկ համար է մէկ քանի  
տարիներէ ի վեր Եւրոպայի մէջ։

Գիտենք որ շերամները կարգ մը մակա-  
բուծային հիւանդութիւններու ենթակայ են,  
զոր օր. փտախա, պղպեղախտ ևն. ատոնց  
պէս ալ, բոլոր միւս թրթեռնիկները և թըր-  
թուրները այդ և այդ կարգի հիւանդու-  
թեանց կ'ենթարկուին։ Այս պարագան նկա-  
տողութեան առնելով, շատ մը փորձեր ըրած  
են, այդ փնտալարի միջոցները տարախոխիկ  
հիւանդութեանց մանրէներովը վարակելով  
ոչնչացնելու մասին։ Յաջողութիւնը մեծ է,  
բայց ի՛նչ օգուտ որ, այս աշխարհիս մէջ ա-  
մէն բան իր հակառակ կողմը ունի. հիմա  
բոլոր շերամարոյծները կը վախնան որ այդ  
կարգի հիւանդութեանց մանրէներովը շատ-  
նալով, քերամներն ալ վաղակուին անոնցմէ։

Ղ. ԲՈՂԱՏ

## ԹԵ ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ

Ահա՛ ուրեմն ընթերցատեցութեան  
հիմնական պատճառը, որ ծնունդ կ'առ-  
նէ նոյն իսկ գրող «մեհեանին» մէջ, եւ  
կը կերպաւորի անոր պաշտօնամատոյց  
«բուրմ»երու ուղեղէն դուրս արձակուա՞ս

քմահաճ պատգամներու ազդեցութեան տակ, ու կ'երթայ արգասաւորիլ, որով մը պէս, հանրային կարծեաց դաշտի ծոցը:

Ի՞նչ ընենք ուրեմն, փրցունե՞նք, կործանե՞նք այդպիսի խաւարակուռ մեհեան մը, որու ապականեալ յարկէն դուրս, տգիտութենէ աւելի վնասակար և յոռի դաստիարակութիւնն է որ կը ծաւալի:

Սխալ է, երբ յոռի դաստիարակութիւն կ'ըսեմք. քանի որ գործնական մարդէ աւելի անվալուկ բանաստեղծներ, — և ի՞նչ բանաստեղծներ — է որ կը բռնեն ժողովուրդին կրթած ուսերուն վրայ:

Սակայն այդ դաստիարակարար լալկան բանաստեղծներու սրտի խորէն դուրս խոյացած հառաչները մէջմէկ անէծքի պաքներ են ձեզ ուղղուած ո՛ր դպրոցավարներ, ո՛ր կրթիչներ, և՛ տոսկացէք անոնցմէ:

Անոթի մարդը երգը ի՞նչ ընէ. հաց տուէ՛ք Գաթա անոր, հաց ճարելու ճաւրան սովորեցուցէք ամէն բանէ առաջ իրեն, որ երբ փորը կշտանայ, այն ատեն ուրախ սրտով իր սրտի երգերը ձեզ նուիրէ, որոնք ճշմարիտ օրհներգութիւններու պէս ձեր գլխուն վրայ ճապաղին: Դուք ժողովուրդը կը քննենք ձեր օրօրներով, և կը գանգատիք ձեր աշխատութեան արգիւնքը եղող իրենց անտարբերութենէն: Կը սխալի՞մք:

Բայց կեցի՛ք, ամէնը այս չէ. որովհետեւ՝ այդ ստուար մեծամասնութեան քով մենք ունինք ուրիշ կարեւոր դասակարգ մ'ալ, որու վերաբերող անհատները, իրենց ուսումով, գիտութիւնով կամ գրիչով կը փայլին, և որ մեծ մասամբ ինքնաշխատութեան դպրոցի աշակերտներն են: Թողունք ուրեմն պահ մը համաճարակէն վարակուածները մէկ կողմ, և հայ գրական «բաղինին» խունկ ծխող անհատները՝ Բախտիի դպրոցի աշակերտներուն մէջ փնտռենք... բայց՝

Դիողինեսի լապտերով: Ինչո՞ւ գիտէք. ասոնցմէ ալ, անոնք որ օտար լեզուներ ուսած են, իրենց մտաւորական սնունդը կը փնտռեն յաճախ, օտար մամուլի արտադրութեանց մէջ. որովհետեւ՝ հայ մամուլը՝ կ'ըսեն, ի վիճակի չէ իրենց մտաւորական պէտքերը գոհացնելու մասին. թէ այսօր՝ ինչ որ կ'արտադրէ հայ մամուլը, կ'ըսեն, մեծ մասամբ ընդօրինակութիւններն են օտար մամուլի արտադրութեանց՝ մերթ խեղաթիւրուած, մերթ կրճատուած, մերթ ևս ձևափոխուած, ուրկէ՞ ընթերցողը կ'ստիպուի բուն իսկ զգրիւրին գիմել: Լա՛ւ. ենթադրենք որ այդպէս ալ ըլլայ, ո՞վ է տեղի տուողը. եթէ իրենց պէսներ բարոյապէս թէ նիւթապէս սատարել գիտնան, հայկական մոմուն ալ ամուլ կը մնայ միթէ:

Հոյկական մամուլը օճանի և քաջաւերի պէտք ունի. ու երբ պէտք եղած յարգանքն մատուցուի իրեն, և խրախոյան վայելէ իրեններէն, կը նուիրէ այն ատեն ինքն ալ իրեններուն, խնամտմօր մը պէս, ամեն ընտրելագոյն և պրտաէական մտային սնունդ:

Բայց չէ՞ մի որ այդ դասակարգն ալ բացի մէկ քանի բացառութիւններէ, իր նախնական դաստիարակութիւնն առած է մեր արդէն յիշած դպրոցներէն ու է մէկուէն մէջ, և մնացեալ բացառութիւններն ալ օտար վարժարաններու մէջ. շատ բնական է ուրեմն որ, տոհմային յատկանիշ կրող ամէն բան զիրենք չի հեաւաբերէ, և իրենց ազգային մամուլին հանդէպ անտարբեր գտնուին:

Ահա մարդիկ, որ իրենց ներքին կեանքին հետ անմիջական կապակցութիւն ունեցող շարժումներուն անգիտակից՝ օտարին կեանքով կը հետաքրքրուին: Ահա՛ մարդիկ, որ իրենց շուրջը անցած դարձածին վրայ գաղափար իսկ չունին, և գրեթէ իրենց համար մանանիսի հաւի չափ օգտակարութիւն չունեցող անցքերու անկարեւոր մանրամասնութիւնները ուսումնասիրելով իրենց

Ժամանակը կ'սպաննեն: Ահա՛ մարդիկ, որ իրենց առհմայնութիւնը երաշխաւորող կարեւորագոյն պէտքերը կ'անտեսեն, և անդրաահման ժողովուրդի առհմային նկարագրէն կը հրապժեւրուին, առանց սակայն մադի մը չափ օգտուիլ գիտնալու կամ կարենալու այդ ուսումնասիրութիւններէն... 25<sup>րդ</sup> Վի որ ասոնք առհմային տեսակէտով, ինչպէս ուրիշ ազգերու մէջ, նոյնպէս և մեր մէջ հիւանդ տարրը կը կազմեն. հայկական մամուլը կրնայ արգիւնաւոր բան մը սպասել ասոնցմէ. ինչո՞ւ երկմտիլ. հարկաւ ոչ. Ուրեմն՝ անիրաւ տեղը չէ որ կ'ըսենք թէ, համաճարակի մը պէս ժողովուրդի մէջ տարածուած ընթերցասեցութեան բուն միջոցի բոյնը մեր դպրոցներուն մէջ կը գտնուի. մաքրեցէ՛ք, հակաճեւեղեցէ՛ք և այրեցէ՛ք այդ բոյները. փոխանակ հիւանդին դէմ բոցոք բառնալու, անոր ընթացքէն գանգատելու, իր անտարբերութիւնը կշտամբելու, եթէ կ'ուզենք որ զէթ նոր և ապագայ սերունդը զերծ մնայ անոնց ազդեցութենէն:

Իսկ յաւէտ պատիւ ու յարգանք այն ամենուն, որոնք օտար լեզուներ գիտնան կամ ոչ, և օտար մամուլ արտագրութիւնները ուսումնասիրելու դիւրութիւններ ալ ունենան կամ ոչ, հարուստ թէ աղքատ, չեն քաշուիր՝ այլ վեհանձնօրէն կը նուիրեն իրենց բարոյական թէ նիւթական ձեռնուստութիւնը յանուն առհմային մամուլի յառաջդիմութեան:

Հիմա թողունք պահ մը, եթէ կ'ուզէք, մեր դպրոցները, և քիչ մ'ալ հայկական մամուլի առանցքին շուրջը դեղերինք, և տեսնենք թէ դահացուցիչ վիճակի մը մէջ կը գտնուի անիկա, իրմէ չահագրգռող ժողովուրդին պահանջներուն յագուրդ տալու մասին:

Դ. ԲՈԼՍ

ՏԿՆ. ԶԱՐՈՒՀԻ Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա.

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ իւր վերջնութիւն թերթին մէջ հաղիւ կրցած էր հրատարակել հետագան:

ՕՐՈՒԱՆ ՄԵԾ ԳՈՅԺԸ

«Հանրագիտակ»ի Բ. ջրմանին վերջնութիւն այն թերթը մամուլին տակ տպուիլ սկսած էր արդէն, երբ կարգացուցաւ օրական հայ թերթերու, «Բիւզտնդիւն»ի ու «Արեւելք»ի մէջ ընդհ. Ազգին սկսած ի խոր խորհրդ սա շանթահար ու անակնկալ մեծ բօթը, թէ՛:

Պէրպերեան Լիկեանի Տէր Տնօրէն և հայրէն Գեղեցիկ Դպրութեանց Ակադեմիական Ազնուական Տիկինը՝

Աննիկին, (Վաղարշապատ), Մաննիկին, Օննիկին, Շահանին ու Նուրհանին, այդ հնգեկին Պէրպերեան ձագուկներուն շնորհալի երիտասարդութիւն մայրը՝ ԶԱՐՈՒՀԻՆ ո՛չ ևս է:

Ողբացեալ Տիկին Զարուհի Ռ. Յ. Պէրպերեանի յուզարկաւորումը, ազգին բարձրագոյն վարժարանին Հիմնադիր ազգային կրթութեան Օրէնադիր մեծ ուսուցչին, խնամատէր ու բանաստեղծ մեծանուն գրագէտին արժանի շքեղութեամբ կտտարուել է իւր հոգեհատոր ու սիրտկան Տիկնոջ մահուան ու թաղման ախուր հանդէսը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ի խորոց սրտի բաժներով Պէրպերեան էֆէնտիին և իւր պարագայից արցունքն ու սուգը, կը մաղթէ երկնային միութարանքը և երկրային մաւտցումը:

Ողբացեալ Տիկին Զարուհի Ռ. Յ. Պէրպերեանի անմուսնալի յիշատակին նուիրուած է յետագայ բանաստեղծալիր կենսագրականը. գործերը նորեկ աշխատակիցներէն Պ. Մկնար յղած է, Իշխանաց կղզիէն, մաս առ մաս պիտի հրատարակուի, ըստ իւր փառքին, փոխանակ միահաղայն ի լոյս ընծալելու:

\* \* \*

Գեղեցիկ ու սիրուն աղջիկ ծնած էր Զարուհին:

Նազելի դուստրն էր բարեկեցիկ Ընտանիքի մը, ոյր հայրն ու մայր ազնուատոհմ

գերդաստանի աճումնաձիգ շառաւիղներ, կանուխէն օժտեցին, խնամեալ կրթութեամբ մ'իրենց սիրական Զաւակ, որ հանգիսացաւ դպրոցին մէջ զգօն աշակերտուհին. զգաստ օրիորդը՝ տան մէջ. և ընկերութեան մէջ՝ սթափ Հայուհին: Ինչպէս եղաւ ժրագլուխ կինն և իւր անունն անփուշ պստկ:

Մայրն էր հայ Կուռնէյիս մը: Հայ վեստեան մը տպած, տնկած էր անարատի բարուց բոյսը, ներս մէջ: Մագթաղինէ մը ձեւած էր հոգին: Հաւատքին հեղինակն էր Տիրամայրն ինքը:

Ծնողաց նահապետական անկարօտ յարկին տակ մանուած, հիւսուած էին Զարուկին ծիրանի կեանքին մետաքսէ օրեր, ժըպիտի մը պէս անոյշ, կոյսի նման ծիծաղուն, թեթեւ ու հեշտ չինչ շունչ մը սիւքին, հեզասահ որքան վճիտ առուակին ջինջ ալեակներ, պայծառ՝ որպէս գարունին անշղարշ առաւօտներ, դայլայլիկի մ'հանգոյն ճուղուն, գոլտը ինչպէս վուզուն տատարակի, ալօթքի զօրէն՝ երկնանուէր, և բարեգուշակ՝ իրրեւ գեղաձանհ ճակտի մը ձերմակ գիր:

Զարուհին՝ երբ ա'լ կոյս հասուն, ու իւզառաւ լապտերն ի ձեռին, հարս գնաց Տիրա Ռ. Պէրպէրեանի, ում խօսեցեալն էր, գոգցես օրորոցէ անտի լինելու համար, առապայն հնգեկին նորածալիկ Պէրպէրեանց, Աննիկին, (վաղաթաղամ), Մաննիկին, Օննիկին, Շահանին ու Նուրհանին գերերջանիկ մայրիկ միանգամայն չարաբաստիկ եղբրամայրը:

ԿԱՇԻԻ ՎՐԱՅ ՈՍԿԵՉՕԾ ՏԱՌԵՐ ԴՐՈՒԱԳԵԼ

Պատասխան թիւ 81 հարցման

Տառանչելիք տեղը նախ սոսնձեցէք (թուր-գալլամագ), եթէ կաշին չիկաղոյն է (կարմիրի մօտ գոյներ) երամ օսլայով (գօլա) կը սոսնձեն, թողէք որ սոսինձը կամ օսլան՝ չորնայ, յետոյ հաւկթի ձերմուցը լաւ մը փրփուրցուցէք, և կախուղ սպունգով (սիւնիկէր) մը ոսսնձուած տեղը քսեցէք երկու, ե-

րեք անգամ, իւրաքանչիւր անգամուն չորնալէն վերջ:

Ասուի (չուխա) կտորի մը վրայ քիչ մը ճարպ (իչ եալը) տարածեցէք, և վերջի անգամուն քուած ձերմուցը տալաւին չի չորցած, այդ ասուին վրայէն անցուցէք, յետոյ ոսկիի թերթ մը դրէք այդ կերպով պատրաստուած տեղը, և երկաթէ կամ արոյրէ պատրաստուած կնիքը կամ տառերը վրան կոխեցէք: Կնիքը հանելէի վերջ, գլուած բամպակով ոսկեթերթի աւելորդ մասերը հանեցէք:

## ՀԱՒԱԲՈՒԾԱԿԱՆ

ԴԱՐՄԱՆ ՀԱԻԲՐՈՒ ՈՋԻԼԻՆ ԴԷՄ

ՊԱՏԱՍԽԱՆ ԹԳԻ 82 ՀԱՐՑՄԱՆ

Դիտուոր պայմանը «մաքրութիւնն» է. եթէ հաւնոց ունիք, ինչպէս ձեր տունը, ձեր պառկած, նստած սենեակները կ'աւելք, կը մաքրէք, նոյն խնամքը և հոգածութիւնը տանելու էք նաև ձեր հաւնոցին:

Այս առթիւ, հաւնոցին գետինը տարածեցէք կամ յարդ, և կամ բարակ և չոր աւաղ այս երկուքէն որն ալ ըլլայ, կը ծառայէ հաւերուն աղտեղութիւնները ծծելու, որով և գետինը միշտ մաքուր կը մնայ. շաբաթը մէկ երկու անգամ պէտք է յարդը կամ աւաղը աւել, և տեղը նոր վառել:

Տարին չորս անգամ պէտք է հաւնոցը ամբողջովին լուալ և մաքրել, և ամէն անգամուն ալ հաւնոցի բոլոր սրտերը, Բադերը ևլն. փեռական լուծաջրով (առիտ Ֆիլէիք) հակահեխելէ վերջը, կրպատել (քրիէճով) զնաւա ընել:

Ինչպէս գիտենք, հաւերը ամփոքութիւն ունին փռիլի մէջ թաղուելով մաքրուելու: Բնութեան այս պահանջը պէտք է դիւրացնել՝ հաւնոցներուն անկիւնները մասնաւոր ամաններու մէջ հետադայ կերպով պատրաստուած բաղադրութիւն մը դնելով:

Ա.—Վերիվերոյ 25 քաչի չափ աւազ եւ խճաքար (չազըլ թաշը) :

Բ.—Նըյնչափ փոշիացած գած (ալշը) :

Գ.—1 քաչի չափ փոշի ծծումբ (քիւլքիւրոտ շիշէյի) :

Առնք ամէնը իրար խառնեցէք, և լեցուցէք և և է յարմար ամաններու մէջ. միայն թէ ինչ աման որ ալ գործածէք, պէտք է բերանը շատ լայն ըլլայ, և խորութիւնը քիչ: Նոյնպէս, վերոյիշեալ նիւթերը պէտք է չոր և փխրուն ըլլան, որպէս զի՝ հաւերը գիւրութեամբ թաւտկին մէջը :

Հաւու ոջիլը ամենէն աւելի տաճարաւոր տաք և փոթորկալից օրերուն մէջ երեսն կուգան, ուստի պէտք է մանաւանդ այդ միջոցներուն աւելի ձեր հսկողութիւնը կրկնապատկէք. որովհետեւ՝ շատ անգամներ պատահած է որ, համաճարակի մը պէս մահ տարածէ հաւնոցներուն մէջ: Այս պարագային՝ վերոյիշեալ պատուէրներէն զատ, պէտք է գործադրէք և հետեւեալները :

Շաբաթը անգամ մը փենական լուծաջուր սրկեցէք հաւնոցներու մէջ, ամեն կողմը. յետոյ բոլոր ծակածուկերուն մէջ փոքրիկ փքոցով մը միջատասպան(\*) փոշի փչեցէք: Այս գործողութիւնը ամիսն եղանակին մէջ մէկ քանի անգամներ կրկնելու է :

Իբր բունկալ ծառայող տարազան (սեյէ), կողով կամ սնտուկ, գոնէ 15—20 օրը անգամ մը մտքրելու է, մէջի յարդը հաւնոցէն գուրս թափելով, նորագելու է. բայց նոր յարդ դնելէ առաջ պէտք է փենական լուծաջուր պակել ամէն կողմը, և յետոյ միջատասպան փոշի ցանել ամեն տեղ: Տարին 5—6 անգամ եռացած ջուրի մէջ թողուլ մէկ քանի վայրկեան. և նոյն խոկ եթէ տեսնէք որ, հաւնոցին մէջ ոջիլը տարածուած է, յաճախ եռացած ջուրով լուացէք բունկալները, ինչպէս և թառերը, և ուրիշ շարժուն կարասները, եթէ կարելի է: Զի՝ մոռնանք ըսելու թէ, բունկալները եռացած ջուրով լուալէ վերջը, չորցնելու և այնպէս տեղը դնելու է, և քիչ մը փենական լուծաջուր սրկելէ յետոյ մէջը լեցնելու է յարդը կամ խտրը :

(\*) Պարզապէս հրապարակը ծախուած բուտոը աը բիւէթըրը, կամ բիրէ թօզը կոչածնին :

Հաւնոցին մէջ ոջիլ տարածուած ատեն, երբ իրենց անկողինները (յարդը) փոխէք, աղէկ կ'ընէք, եթէ զանոնք այրէք :

Բսլըր այս խնամքներուն մէջ, եթէ պատահի որ, մէկ կամ մէկ քանի հաւեր կրկին ոջլաին, հետեւեալ կերպով կրնաք խոյն առաջըր առնել :

Երեկոյին, երբ հաւերը ներս մտնան և թառին, ուշադրութեամբ բռնեցէք, ոտքերը ձեռքերնուդ մէջ, և «գլուխը դէպ ի վար», նոյն միջոցին, օգնական մը՝ պզտիկ փքոցով միջատասպան փոշի պէտք է փչէ փետուրներուն տակը, և մանաւորապէս թեւերուն տակը, կանալը և սրջին վրայ: Հաւը այս կերպով բռնած ատեննիդ, արդէն իր փետուրները բացուելով, միջատասպան փոշին ալ դիւրութեամբ մինչև մորթին վրայ կը հասնի: Երբ գործողութիւնը լրանայ, կրկին հաւը վետեղեցէք ուշադրութեամբ թառին վրայ :

\*  
\* \*

Քանի որ հաւնոցներու առողջապահութեան վրայ կը խօսինք, կ'ուզեմ յանձնարարել ձեզ միջոց մը, որու կիրարկութիւնը շատ նպատուաւոր ազդեցութիւն կ'ընէ հաւերու առողջութեան վրայ :

Տարին չորս անգամ, իւրաքանչիւր եղանակի սիկզըր (գարուն, ամառ և լին) ձեր հաւերուն մաքրողական տուէք. այս առթիւ, իրենց խոկու ծառայող ջուրին մէջ նատրոնի ծծմբատ (սիւլֆատ) աը սուտ կամ սիւլֆատը մանեկի) խառնեցէք՝ մէկ քաշ ջուրին մէկ ապուրի դգալ: Մէկ օր ամբողջ պէտք է այս ջուրը ձեր հաւերուն տրամադրութեան տակ գտնուի, որ ուրիշ ջուր չի գտնելով, կը պարտաւորին անպատճառ անկէ խոկել :

Գործադրութիւնը երբեք դժուար չէ, և իր օգտակարութեան տեսակէտով ջերմապէս յանձնարարելի է, որովհետեւ, սակի դիւրին է նախադիւրեւեան միջոցներով, հիւանդութեանց առաջըր առնել, քան հիւանդութիւնը բուժել :

Ղ. ԲՈՒԱՏ

## ՄԵՔԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Առաջին օրինակին մէջ կը տեսնենք որ, մեր երկրութեւն ձողին ծաւալը և տեղակարար ծանրութիւնը գիտնալով, իր իսկական ծանրութիւնը հաշուելով գըլտնք. ըսել է, առանց կշիռի՝ մարմնոց ծանրութիւնը կարելի է գտնել, կշիռին տեղ մէջը գործածելով:

Իբր հարստա կանոն, ու է մարմնոյ մը ծանրութիւնը գտնելու համար, պէտք է անոր ծաւալը իր խտութիւնով (տեսակը, ծանր.) բազմապատկել: Եւ երբ մարմնոյ ծանրութիւնը կ'գրովներկայենք, և ծաւալը իր իսկ խտութիւնը ի գրով, այն տառն վերոյիշեալ համեմատութեան ուղեւորական տարազը կը ներկայանայ հետեւեալ կերպով:

$$h = \frac{y}{x}$$

Այս գրութեան կարեւորութիւնը մանաւանդ այն տառն առեւի երեան կողայ, երբ ուղենք գտնալ այնպիսի մարմիններու ծանրութիւնը, զորա կշռել անկարելի կ'ըլլայ և կամ անժանօթ է մեզ: Զոր օրինակ, շինուէլիք տան մը հիմնքու տարողութեան չափը գիտնալով, կ'ուղենք իւրաքանչիւր յարկի պատերուն տրուելիք հաստատութիւնը նախապէս հասկնալ, որ իրենց ոտացած ծանրութիւնով, այդ հիմքը չի վնասեն կամ չի փլցունեն, և քանի որ այդ պատերու շինութեանց գործածուած շինուածանիւթերու տեսկը. ծանրութիւնը գիտենք, կրնանք անոնց ծաւալը գտնելով, բազմապատկել՝ և ծանրութիւննին գըլտնել: Ինչպէս ուրիշ անգամ ալ երկրութեւն, մարմարիօնէ, և կամ ձուլածոյ ու է գանգուածի մը ծանրութիւնը կ'ուղենք հասկնալ, որու ծաւալը թէև գիւրութեամբ կը գտնուի չափելով, բայց կըշռել անկարելի կ'ըլլայ. առանց պէս շատ մը պարագաներ միշտ կը հանդիպին գործնական կեանքի մէջ:

